

տութեան ձեռքովն կարող է բարւոքել իւր կեւցութեան ընթացքը ու հանգստութիւնով վայելել Աստուծոյ բարիքները. ո՞վ չի խոստովանվել որ Հայր ներկայ դարուն պէս աղատ միջոցներ չ'ի ունեցել, որ զոնեայ եկեղեցական պաշտօնն առարգել կատարել կարողանայր, և ուղղափառ օրէնքը յայտնի մէկ մէկու հաղորդել. ու ուրեմն մինչդեռ շնորհիւ լուսաբաշխ մերսուրք Հայրակետիս լուսակարօտ մանկունքս կտեսնենք լուսոյ նշոյը, թող ջանայ ամեն մէկը մասն ունենալ նոյն նշուլիցը, ու հերքի իրանից հին աւուրց հետէ արմատացած տղիտութեան խաւարն. վերջ բանիս զրիչս կինդրէ իմ գեռահաս ընկերներին՝ ունենալ բարենախանձ ջանք, որպէս զի քննութեան տակ ձգելով ուսման յարդը, կթել կարողանան նրանից քաղցր ու համեղ բարի պտուղներ, էնպէս որ ծերութեան ժամանակին անաշխատ վայելել հանդիսանան:

### ՕՐԻՆԱԿ ԳԼՈՒԽԱՆԿԱ, ՏԵՐ ԽՈՎԱԿԱՐԵԱՆՑ

Է 21 Հ-Ի-Դ-Շ-Ե-Ռ-Ի 1871 -Ի

Է Ք. Ն-Ի-Շ-Ա-Շ-Ի-Ռ.

### ԸՆԹԵՐՑՈՒՐԱՆ ՀԱՅՈՑ

ԱՂԵՔՍՈՆԴՐԱՊՈԼԱՑ

Օր ըստ օրէ մարդկային մոտաւոր և հոգեոր յատկութեանց զարգացման համար զանազան միջոցներ ի գործ կրթուին, զանազան յառաջարկութիւններ, մոքեր և համոզմունք ի հանդէս կելնին այդ սրբազան նպատակի վերաբերութեամբ. ամենայն մի րոպէ մարդոց ականջին արձագանք կրկնէ համաձայն նորա բնական ձգտման՝ յառաջ, յառաջ գէպ ի առողջ միտք, գէպ ի հաստատ զաղափար, միով բանիւ գէպ ի կատարեալ և արժանաւոր կոչումն մարդկութեան. — Թէ և ամենայն մի ժողովրդց և ամենայն մի անհամար համար չէ կարելի մի օրինակ սահման ընտրել նորա հասկացողութիւնը զարգացնելու նկատմամբ, որովհետեւ բնութիւնը որոշ որոշ աղղեցութիւն կգործէ ֆիզիքական աշխարհի մէջ, սակայն եթէ ամենայն մի ուսումնական հայեցուածք, ամենայն

մի ուսումնական միտք և գործ միակերպ կձրգտին գէպ ի բարսյական և մոտաւորական լուսաւորութեան կէտը, ապա և կարելի է, եթէ ոչ ընդհանուր — գոնէ մասնաւոր կերպիւ օրինակութիւնորանցով. Մտաւոր սահմանը այնքան զարմանալի կերպով ստեղծագործուած է Երարշից, որ նորա զարգացման համար քանի գարերէ ի վեր որքան հանճարաւոր օրէնքներ, ողքան կանոններ և որքան բարձր գաղափարներ ծնած են փիլիսոփաայօթէն, և եթէ է կեանքի շարունակութիւն, փոխազրութիւն անցեղոյն ի ներկայ, և ներկային յապառնի, պիտի կատարելագործուին այդ հանճարները. սակայն և զարձեալ պիտի տկարանան հոգեկան և բնական յատկութիւնքն նոցա բարձր սահմանովն ամփոփել մի ենթարկութեան ներքոյ կատարելապէս զարգացնելու հայեցմամբ. Լուսաւոր և բարեկիրթ աղքաց մէջ ժողովրդոց ամենայն մի դասի համար անխափի զարգացման իրերև մի գլւխաւոր միջոց ընդունուած են ընթերցարաններն. որոց բազմազիմի օգուտներն աներկայ բարիք կը պատրաստեն մարդկանց : Աւսումնարանը մասնաւոր կերպիւ հասկացողութիւն միայն կընծայէ մարդոց մի որ և իցէ առարկայի վերայ, բայց մի և նոյն ժամանակ միջոց չունի ուսումնարանը փորձական և գործնական տեղեկութիւն տալու նորան, կենաց մէջը կը վճռուի այն : Մի ծաղկել միայն՝ որքան և գեղեցիկ լինի, չէ կարող զարունակարել, կեանքէ առնուած մի հանճարեղ առած է այս. մի մարդոց հանճարը որքան և զօրաւոր լինի առանձնասակէս գործելու, և այն գէպ ի ուղեղը միշտ, ոյժ չունի, ընդհանուր մարդկութիւն մի խորհրդաւոր կերպիւ կապակցութիւն ունի իւր մէջ անխողիկ շղթային ամրացած : Ընթերցարանը զանազան կարծիքներ, զանազան փորձեր յերեան կրերէ, մարդոց ուշագրութիւնը կը դրաւուի այն տեղ, զործունէութիւնը յառաջ տանելու զրդումներ կծնանի, օգտաւէտ և բարի օրինակներ կը տպաւորէ իւր զաղափարի մէջ, կլայնանայ նորա հասկացողութեան շրջանակը, և վերջապէս ժողովոյ մէջ քարոզելով իւր բնական ձգտմունքը և մի որ և իցէ կարծիքը, կերպ կերպ կամ հակասաց և կամ համապատասխան կարծիքներ կըէ, որոնք և բաղդատուելով միմիանց հետ մի

Նոր աւելի շահաւէտ ծնունդ կարտազբն յօդուտ ընդհանուր հասարակութեան։ Խախ բնական կեանք հարկաւոր է և ապա բարցական և ուսումնական։ սակայն պիտոյ է ճանաչել, թէ այս վերջիններն որքան սերտ կապակցութիւն և յարաբերութիւն ունին առաջնոյ բարեկառութեան չետ, առանց սոցա տերեւաթափ և անպտղատու ծառոյ պիտի նըմանի այն. սորանցով միայն կենդանի և երջանիկ կհանդիսանայ մարդ. սորանցով միայն իւր ամենայն մի ձեռնարկութիւնը կարող կլինի նա դէպի անմիտ և բարի վախճանի կէտը հասուցանել և պսակել նորա զլուխը արժանաւոր և վսեմ յաղթանակի գարիններով։ Հետևաբար ընթերցարանը (ուսումնարանից յետոյ) պիտոյ է ճանաչել զարգացման մի սուրբ տուն, և զայն բարեպէս կանոնաւորելու համար ամենայն ճիզն ի գործ գնել։ Մեր Աղէքսանդրապօլու մէջ քանի տարուց ի վեր կայ մի ընթերցարան, որ և քանի քանի անգամ մաշու և վիրակենդանութեան աղդգեցութեանց տակ ճնշուելէ մինչ ցարդ։ Այդ ընթերցարանի բարեկարգութեան ձայնը անցեալ տարի հրապարակաւ արդարե չնշուեցաւ, սակայն նայելով նորա իրական կէտին և պահանջմանց՝ այժմ իբրև հիւանդ կըդուուի այդ ընթերցարանը, Ազգասիրաց թիւը դասուելու արժանաւորութիւն ունեցող պարոնները այժմ վեց ամսու մէջ մէկ անգամ զալը այն տեղ կըլսնան անգամ, մինչ գեռ անպատակ և անօգուտ ձեռնարկութիւններն պատրաստ են զրաւել նոցա հարկաւոր բուպէն։ Թողնելով զայդ՝ պիտոյ է ասել. այժմ դէպի ի կըթութեան և լուսաւորութեան պայմաններն զարթել է ձգտում մեր հասարակութեան մէջ ևս, սուրբ է այդ, հարկաւոր է ջանալ և զործել, որպէս զի այդ բարի զգացմունքը օր ըստ օրէ դէպի ի յառաջ յառաջ միշտ քայլափոխէ. և աչա այնուհետև բարցապէս և մտաւորապէս վարժութեան և զարգացման արշալցը պիտի պայծառ շղթով ճաճանչէ իւր լոյսը, մեծամեծ արդասկիններ խոստանալով մեր հասարակութեան. զորա համար հարկաւոր է ձեռնհաս միջոցներով զարնան կենդանի պատկեր տալու ընթերցարանին և հասարակութեան ուշքը զրաւելու այն տեղ, նրապատակաւ բարի խորհուրդների, օգտաւէտ քա-

րոզների և զարգացման բարձր կէտերի հետ նոցա ժանօմացներու։ Պիտոյ է աշխատիլ որ ընթերցարանի ուղին միշտ դէպի ի յառաջաղիմութիւն դէպի ի իւր էական պայմանը և դէպի ի հաստատութիւն յառաջ զնար, և աչա ուսումնարանի սուրբ նպատակին և վախճանին մի գորաւոր օգնական և աջակից ընկեր կհանդիսանար հասարակութեան օգտին վերըբերեալ պայմաններ և օգտաւէտ խորհուրդներ էապէս իրագործելու խոստովանութիւն կարգալով։ Առ այժմ այսքանս թող բաւականանայ պատուելի ընթերցողիդ։

### Յովհաննէս Աղաւելուանց.

24 Հւնի. 1871 ամ

Աղաւելուանց:

ԲԱՆԱՍՏԵՐ ԾՔՆ ՀԻՄՈՒԱԾԾՔ ԶԻՒԱՆԵՎ\*)

Մեր համարազարացի Պ. Յ. Խօջայեանցի Գէտէ և վերնազրով յօդուածը պատուական Երարատայ էջերում կարգացինք, որը հարևանցի և շատ և շատ կցկտուր խօսումէ Աղէքսանդրապօլու մի քանի կէտերի վրայ։ Պ. Խօջայեանցի այսքան կըցկտուր ընթանալու պատճառը հասկացանք, որ սագերին չգրգուելն է։ Բարի նպատակ . . . :

Թէև մոազիր էինք նոյն զրուածքի ամեն մի թերութիւնքը բարեկամաբար լցուցանելու, բայց ժամանակը չներելով՝ թողնումենք մի ուրիշ բարեկամատեհ միջոցի, այժմ միայն խօսելով Աշուղների վերաբերութեամբ զրածի դէմ, լաւ հասկացած լինելով՝ որ մեր յարգոյ ընթերցողքը զորանից շատ բան կարող են եղակացնել Աղէքսանդրապօլու մասին, Աւրեմն սկսենք մեր ասելիքը չնեղուելով նպատակից, որ մի գուցէ ձանձրութիւն պատճառենք մեր սիրելի ընթերցողներին։ — Պ. Խօջայեանցը զրումէ, իր թիւութէ մեր աշուղները ըստ մեծի մասին երգումն տաճկերէն, թէ սրճանոցներում, և թէ աներում, և ժողովուրդը մէծ ուրախութեամբ ականջ է դնում

(\*) Թէպէտ այս յօդուածը մի բանի ամիս բառաց ատացին էր ամբագրութիւնս, բայց մոռացմանը մնացած էր.